

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԺՄ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԵՆ, ՔԱՆ ԵՐԲԵՎԷ

Նոյեմբերի 17-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:



Հանդիպմանը կողմերը միմյանց շնորհավորեցին դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակի առիթով՝ շեշտելով, որ երկու ժողովուրդներին կապում է ընդհանուր պատմությունը:

Հանդիպմանը գրուցակիցները քննարկեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առկա բարիդրացիական հարաբերություններն ու առաջիկա համագործակցության հեռանկարները, անդրադարձան երկու երկրների խորհրդարանների համագործակցության հարցերին: Նշվեց, որ երկու երկրների խորհրդարանների միջեւ համագործակցությունը զարգանում է մշտական դինամիկայով,

ինչն է՛լ ավելի է խորացնում բարիդրացիական հարաբերությունները:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՊԵՏՐՅՈՒՋԷ

ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԵՄԱՏ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Ե 1,5 ՄԻԼԻԱՐԴՈՎ ԵՎ ԿԿԱԶՄԻ 23,1 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻ



Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին երկրի օրենսդիր մարմնին ներկայացրեց 2023 թվականի պետական բյուջեի նախագիծը:

Ինչպես նշեց ֆինանսների նախարարը, նախորդի համեմատ բյուջեն ավելանում է 1,5 միլիարդով եւ 2023 թվականի բյուջեն ծրագրված է 23,1 միլիարդ լարիի ծավալով եւ այդ գումարի 30 տոկոսը նախատեսված է սոցիալական եւ առողջապահական ծրագրերի ֆինանսավորման համար: Այդ նպատակով, պետական բյուջեից հատկացվելու է 7 միլիարդ լարի:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԱՂԱԿԱՆ ԵՎՐԱՄՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ»

Նոյեմբերի 15-17-ը պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Եվրոպական հարեւանության քաղաքականության եւ ընդլայնման հարցերով եվրահանձնակատար Օլիվեր Վարիեյը:

Այցի շրջանակներում, եվրահանձնակատարը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու, Վրաստանի արտաքին գործերի նախարար Իլիա Դարիչի-

աշվիլու, խորհրդարանական մեծամասնության եւ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Իրակլի Դարիբաշվիլու եւ Օլիվեր Վարիեյի հանդիպմանը կողմերը քննարկեցին Եվրամիության

անդամակցության հեռանկարները, Եվրահանձնաժողովի առաջադրած 12 հանձնարարականների կատարման ընթացքը: Հանդիպման օրակարգում էին նաեւ Վրաստանի տնտեսական առաջընթացի, ռուս-ուկրաինական պատերազմի պայմաններում տարածաշրջանային անվտանգության հարցերը:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ը ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Ե

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԺԱՆԱՂԱՏԻՎ ՀԱՄԱԿԵՅՈՒԹՅԱՆ ԵԶՎԿԻ ԴԱՏՄԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ

Նոյեմբերի 16-ին համաշխարհային հանրությունը նշեց Հանդուրժողականության միջազգային օրը: Հանդուրժողականության օրը հանդիսավորապես նշվեց ազգային բազմազանության եւ արժանապատիվ համակեցության հարուստ պատմական փորձ ունեցող Վրաստանում:

Օրվա կապակցությամբ իր շնորհավորական ուղերձում Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին նշեց, որ հանդուրժողականությունը, մարդկանց գնահատմանը, արժանապատիվ կապակցությամբ զուգահեռաբար հարգանքները եւ տարբերությունների ընդունումը մեր մեծ մշակույթի ու պատմության շարունակական ավանդույթն են եւ վրացական ինքնության անբաժանելի մասը:

- Հանդուրժողականությունը, մարդկանց գնահատումը, արժանապատիվության նկատմամբ հարգանքը եւ տարբերությունների ընդունումը մեր մեծ մշակույթի ու պատմության շարունակական ավանդույթն են, վրացական ինքնության անբաժանելի մասը:

- Դարեր շարունակ տարբեր ազգությունների, կրոնների եւ ավանդույթների մարդիկ ար-

ժանակաբար են, վրացական ինքնության անբաժանելի մասը:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՇԵՆԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ՝ ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ

Նոյեմբերի 16-ին կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու հեռախոսազրույցը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

Հեռախոսազրույցի ընթացքում կողմերը քննարկեցին ինչպես երկու կողմ, այնպես էլ տարածաշրջանային նշանակության հարցեր: Այս համատեքստում կարելի էր ակնարկել հարավկովկասյան տարածաշրջանում մթնոլորտի բարելավումն ու այդ ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացումը:



Երկու երկրների վարչապետերն ընդգծեցին Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առեւտրատնտեսական կապերի շարունակական զարգացման անհրաժեշտությունը՝ կողմերը պայմանավորվեցին 2023 թվականի սկզբին Երեւանում անցկացնել վրաց-հայկական միջկառավարական համձնաժողովի նիստ:

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՆՉԱՎՅՎԵՑ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 14-ին Թբիլիսիում, Վրաստանի արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Լաշա Դարսալիայի եւ Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանի ղլխավորությամբ, անցկացվեց Վրաստանի եւ Հայաստանի արտաքին գերատեսչությունների հերթական քաղաքական խորհրդակցությունը:



Երկու երկրների բարիդրացիական հարաբերությունների աճող դինամիկայի ներքո, կողմերը քննարկեցին բարձր մակարդակի շփումների եւ քաղաքական երկխոսության օրակարգը, ոլորտային, ինչպես նաեւ բազմակողմ ու տարածաշրջանային անվտանգային հարցերի լայն շրջանակ:

Այցի շրջանակներում, Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Մնացական Սաֆարյանը հանդիպում ունեցավ նաեւ Վրաստանի վարչապետի աշխատակազմի Օրագրավորման եւ կառավարական համադրությունների հարցերով վարչության պետ Վախթանգ Քաթամաձեի հետ:

ԿԱՅԱՆԱՎ ԳԻՐԳԻ ԴՈՒՏՈՒՐԱՇՎԻԼԻ ԵՎ ԱՆՈՏ ՍՄԲԱՏՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Նոյեմբերի 16-ին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը հանդիպում ունեցավ Վրաստանի Քվեմո Քարթլիի տարածաշրջանի պետական լիազոր-նահանգապետ Գիրգի Դոխտուրաշվիլու հետ: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ փոխնահանգապետ Նիկա Կոբախիձեն:

Հանդիպմանը կողմերը մտքեր փոխանակեցին Վրաստանի եւ Հայաստանի սահմանամերձ շրջանների միջեւ ապակետորոնացված համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:



ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԺՄ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԵՆ, ՔԱՆ ԵՐԲԵՎԷ

(Սկիզբը 1-ին էջում)

Հանդիպմանը կողմերն անդրադարձան նաև տարածաշրջանային անվտանգության հարցերին, ընդգծվեց խաղաղ ճանապարհով հակամարտության կարգավորման կարևորությունը: Ինչպես նշեց Իրանի Դարիբաշվիլին, Վրաստանի կողմից առաջարկած հարեւանության խաղաղ նախաձեռնությունը կարող է կայուն հիմք հանդիսանալ տարածաշրջանում վատահոլության հաստատման գործում:

խաղաղության եւ կայունության պահպանմանն ուղղված Վրաստանի հետաքրքրվածությունը:

Տարածաշրջանային անվտանգության քննարկմանը Վրաստանի վարչապետը նշեց, որ ջերմ հեռախոսազրույց է ունեցել Չայկոյի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ եւ փաստեց, որ վրաց-հայկական հարաբերություններն այժմ ավելի բարձր մակարդակի վրա են, քան երբեք: Նրա խոսքով, այդ մասին են վկայում բարձրաստիճան փոխայցերի հաճախականությունն ու խաղաղության ձգտելու ընդհանուր ջանքերը:

Հանդիպմանը հայկական կողմից մասնակցեցին Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Էդուարդ Աղաջանյանը, կրթության, գիտության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի կոմիտեի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, Հայաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների դեպարտամենտի ղեկավար Տիգրան Սեյրանյանը:

Վրացական կողմից հանդիպմանը մասնակցում էին Վրաստանի կառավարության աշխատակազմի ղեկավար Ռեւազ Ջավելիժեն, Հայաստանում Վրաստանի գործերի հավատարմատար Իրակլի Կվանճախաձեն:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 16-ին Թբիլիսիի Վաստ Աբաշիձեի անվան պետական երաժշտական թատրոնում Վրաստանում Հայաստանի դեսպանության կողմից կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Հայաստանի եւ Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին: Միջոցառումն անցկացվեց Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլու բարձր հովանու ներքո եւ մասնակցությամբ:



Տոնական միջոցառմանը մասնակցում էին երկու երկրների խորհրդարանների պատգամավորներ, Վրաստանի կառավարության ներկայացուցիչներ, Վրաստանում հավատարմագրված դեսպաններ եւ դիվանագիտական կորպուսի ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Ախալքալաքի, Նինոծմինդայի, Ախալցխի, Ասպինձալի, Ծալկայի, Բուրխիսի, Մառնուլիի մունիցիպալիտետների քաղաքապետարանների եւ սակրեբուլոնների ղեկավարները, Կիրահայրոց թեմի առաջնորդը եւ հայ ու վրաց եկեղեցիների ներկայացուցիչներ, բարձրաստիճան այլ հյուրեր, Վրաստանում բնակվող հայ եւ վրաց հասարակական-մշակութային գործիչներ, այլ հյուրեր:

Հանդիսավոր միջոցառումը բացեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը:

Ելույթներով հանդես եկան նաև Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին եւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը: Երկու երկրների խորհրդարանների նախագահներն անդրադարձան վրաց եւ հայ ժողովուրդների պատմական ու մշակութային հարուստ կապերին, բարձր գնահատեցին երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների 30-ամյա պատմության ընթացքում երկկողմ հարաբերություններում արձանագրված հաջողություններն ու ձեռքբերումները:

Այսօր նշում ենք մեր դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակը, սակայն այսօրվա չի սահմանափակվում մեր հարաբերությունների պատմությունը. մեր երկու ժողովուրդներին հազարամյակների պատմություն է կապում,- ասաց Շավլա Պապուաշվիլին եւ հավելեց, որ Վրաստանի եւ Հայաստանի պատմությունը փոխկապակցված. մշակութային կապերով սերտաճած, միմյանց փորձառություն փոխանցող պատմություն է:

Ուրախ եմ, որ այսօր եղբայրական Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակում, նման հիշարժան միջոցառման եմ ներկա: Ուրախ եմ նաև, որ այստեղ է իմ լավ բարեկամ եւ գործընկեր Շավլան: Այս տարի լուսնում է Հայաստանի եւ Վրաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը, սակայն հայ-վրացական համատեղ անցած ճանապարհը, պատմական առնչությունները եւ ավանդույթներն ունեն հազարամյակների պատմություն,- ասաց Ալեն Սիմոնյանը:

Միջոցառմանը հյուրերի ուշադրությանը ներկայացվեց հայ-վրացական հարաբերությունների 30-ամյա պատմության ընթացքում երկու երկրների բարձրաստիճան պաշտոնյաների այցերի եւ հանդիպումների արխիվային լուսանկարների կարճ ֆոտոշարք, որից հետո իրենց բարձր կատարողական արվեստով հանդես եկան Տավուշի թեմի մանկապատանեկան երգչախմբի երեխաները:

«ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԱՆԼՈՒԹԵԼԻ ԽՆԴԻՐՆԵՐ ԶԿԱՆ»

Նոյեմբերի 16-19-ը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլու հրավերով, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը եռօրյա այցով գտնվում էր Վրաստանում:

ԱՌԱՋՆԱՅԵՐԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ ՄԻՋՆՈՐՅՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԽՈՐԱՅՈՒՄ



Այցի առաջին օրը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլու եւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի միջև խորհրդարանում կայացած առանձնազրույցից հետո, անցկացվեց ընդլայնված կազմով հանդիպում:

Հանդիպմանը Ազգային ժողովի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը, կրթության, գիտության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, պատգամավորներ Լենա Նազարյանը, Հակոբ Ասլանյանը, Սարգիս Խանդանյանը, Հասմիկ Հակոբյանը, Նարեկ Բաբայանը եւ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների դեպարտամենտի ղեկավար Տիգրան Սեյրանյանը: Վրացական կողմը ներկայացնում էին Վրաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ, Վրաստան-Հայաստան բարեկամական խմբի համանախագահ Գիորգի Վոլսկին, խորհրդարանի մշակույթի կոմիտեի նախագահ Էլիսո Բոլքվաձեն, պատգամավորներ Սամվել Մանուկյանը, Սմբատ Կյուրելյանը, Գիորգի Խելաշվիլին, Էլզուրա Գոցիրիձեն, Խաթունա Սամնիձեն, խորհրդարանի նախագահի խորհրդական Թենգիզ Շարմանաշվիլին:

Խոսելով միջխորհրդարանական հարաբերությունների մասին՝ կողմերն անդրադարձան այցի շրջանակում խորհրդարանների արտաքին հարաբերությունների եւ մշակութային հարցերով մշտական հանձնաժողովների, ինչպես նաև կրթության ու մշակույթի հանձնաժողովների միջև ստորագրվելիք համագործակցության հուշագրերի կարելիությանը:

Ընդգծվեց նաև երկու խորհրդարաններում գործող բարեկամական խմբերի դերը՝ շեշտելով խորհրդարանների փոխնախագահների կողմից ղեկավարվելու փաստը:

Հայաստանի Ազգային ժողովի նախագահը նկատեց, որ կրթամշակութային համագործակցության հարթակը լավ խթան է Վրաստանի բուհերում հայագիտական կենտրոնի կամ ամբիոնի եւ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում վրացագիտական ամբիոնների զարգացման հնարավորությունների համար:

Կողմերը քննարկեցին տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր:

Հանդիպման ավարտից հետո կայացած համատեղ մամուլի ատուլիսում Վրաստանի խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին հայտարարեց, որ հայ գործընկերոջ հետ քննարկել են կրթության, մշակույթի, տրանսպորտի եւ այլ ոլորտներում երկկողմ համագործակցության զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները, անդրադարձել նաև Վրաստանի հայ համայնքի կյանքի կարելի հարցերին՝ ընդգծելով համայնքի դերը վրաց-հայկական հարաբերությունների զարգացման գործում:

Կարծում եմ, որ, ընդհանուր առմամբ, պետությունների բարեկամությունն առաջին հերթին ժողովուրդների ջերմ հարաբերություններն են: Խորհրդարանում մեր այս հանդիպու-

մը եւս մեկ կարելի քայլ է մեր հարաբերությունների զարգացման համար,- ասաց Շավլա Պապուաշվիլին:

- Ես մշտապես ընդգծել եմ, որ Վրաստանի հետ առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների զարգացումը մեր երկրի արտաքին քաղաքականության ամենակարևոր առաջնահերթությունների շարքում է: Մենք մեծապես հետաքրքրված ենք Վրաստանի հետ ռազմավարական գործընկերության հաստատմամբ,- իր հերթին հայտարարեց Ալեն Սիմոնյանը:

Նա մասնավորապես ընդգծեց Վրաստանի տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանն ու պահպանմանն ուղղված Վրաստանի նախաձեռնած քայլերը:

ՍՏՈՐԱԳՐՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԵՐ

Հայաստանի Ազգային ժողովի նախագահի Վրաստան կատարած այցի շրջանակներում, Վրաստանի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Նիկոլո Սամխարաձեն հանդիպում ունեցավ Հայաստանի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանի, հանձնաժողովի, ինչպես նաև Ազգային ժողովում Հայաստան-Վրաստան բարեկամական խմբի անդամներ Լենա Նազարյանի, Սարգիս Խանդանյանի հետ:

Նիկոլո Սամխարաձեն եւ Էդուարդ Աղաջանյանը ստորագրեցին Վրաստանի եւ Հայաստանի խորհրդարանների արտաքին հարաբերությունների հանձնաժողովների միջև համագործակցության հուշագիր:

Վրաստանի խորհրդարանի մշակույթի կոմիտեի նախագահ Էլիսո Բոլքվաձեի եւ Հայաստանի Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանի, հանձնաժողովի անդամներ Հասմիկ Հակոբյանի, Նարեկ Բաբայանի եւ Հակոբ Ասլանյանի հետ: Հանդիպմանը Էլիսո Բոլքվաձեն եւ Սիսակ Գաբրիելյանը ստորագրեցին հանձնաժողովների համագործակցության հուշագիր:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԹԲԻԼԻՍԻԻ

«ՀՈՎՉԱՆՆԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՏՈՒՆ» ԿԵՆՏՐՈՆ

Թբիլիսիում, պաշտոնական այցի շրջանակներում, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը տիկնոջ՝ Մարիամ Սիմոնյանի եւ Հայաստանի խորհրդարանական պատվիրակության անդամների հետ այցելեցին Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոն, որտեղ հանդիպում ունեցան թբիլիսահայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը ներկա էին Կիրահայրոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրյանը, Թբիլիսիի Պ.Աղանյանի անվան պետական մանկապարտեզի թատրոնի ղեկավար ղեկավար Արմեն Բայանդուրյանը, Վրաստանի կրթության նախարարության աշխատակցուհի Կարինե Մանուկյանը, Վրաստանի կառավարության աշխատակազմի խորհրդարանի ու երկրի նախագահի հետ կապերի դեպարտամենտի աշխատակից Կարեն Եղիազարյանը, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի ղեկավար Եվգենյա Մարկոսյանը, Վրաստանի «Կառնոտա» գործադիր տնօրեն Անահիտ Մխչյանը:



ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ը ՀԱՆՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ՀԱՄԱԿԵՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԻՆԱԿ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ժամանակակից ապրել են մեր հողի վրա եւ միասին կերտել մեր ընդհանուր հայրենիքի պատմությունը:

Մարդու իրավունքների եւ ազատությունների հիմնարար արժեքները ճանաչված եւ երաշխավորված են մեր երկրի սահմանադրությամբ: Մենք հարգում ենք այդ արժեքները եւ միշտ կհարգենք», ասված է վարչապետի շնորհավորական ուղերձում:

ՊԵՏԱԽԱՐԱՐ ԹԵՎ ԱՆՎԼԵԴԻԱՆԻՆ ՀԱՆԴԻՊԵՑ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ



Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվլեդիանին, Հանդուրժողականության միջազգային օրվա կապակցությամբ, Վրաստանի Եվրոպական եւ Եվրատլանտյան ինտեգրման հիմնախնդիրների վերաբերյալ մշակութային-կրթական սեմինարի շրջանակներում, հանդիպում ունեցավ ազգային փոքրամասնություններով հոծաբնակ Սամցխե-Ջավախեթի, Քվեմո Քարթլիի եւ Կախեթի տարածարջանների երիտասարդների հետ:

Ինչպես նշեց պետնախարարը, Վրաստանում, հաշվի առնելով էթնիկապես բազմազան հասարակության հանդուրժողական միջավայրում արժանապատիվ համակեցության եզակի պատմական փորձը, ինչպես նաեւ հավասարության սկզբունքների եւ ընդհանուր եվրոպական արժեքների վրա հաստատված միջազգային չափանիշներն ու մեխանիզմները, ապահովվում է հավասարությունը եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:

Թեա Ախվլեդիանին երիտասարդներին ներկայացրեց պետնախարարի գրասենյակի գործունեությունը, առաջնահերթությունները, ձեռք բերված արդյունքները եւ ապագա ծրագրերը, որոնց իրականացման գործում երիտասարդ սերնդի ներգ-

րավվածության բարձրացումը քաղաքականության հիմնական առաջնահերթություններից է: Թեա Ախվլեդիանին ընդգծեց ազգային փոքրամասնություններով հոծաբնակ շրջանների բնակչության իրազեկման կարեւորությունը պետական քաղաքականության արդյունավետ իրականացման գործընթացում, ներառյալ Վրաստանի եվրոպական եւ Եվրատլանտյան ինտեգրման հեռանկարները:

ՀԱՆՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԹԲԻԼԻՍԻ ՍԱԿՐԵՐՈՒԼՈՅՈՒՄ

Նոյեմբերի 16-ին, Թբիլիսիի սակրեբուլոյին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի նախաձեռնությամբ, մայրաքաղաքի ներկայացուցչական մարմնի շենքի Թամար թագուհու անվան դահլիճում անցկացվեց միջոցառում՝ նվիրված Հանդուրժողականության միջազգային օրվան: Միջոցառումը բացեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

Դահլիճում ձեռնակերպվել էին Վրաստանում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների անկյուններ, որտեղ ներկայացվել էին յուրաքանչյուր ազգին բնորոշ կենցաղի ու պատմանյութական մշակույթի ցուցանմուշներ: Դահլիճում ներկայացված տարբեր ազգերի (ուկրաինական, ադրբեջանական, ասորական, եգիպտական, հրեական, հունական, լատվիական, օսական, արխազական, բելառուսական, լեհա-



կան, գերմանական) մշակութային անկյունների թվում էր նաեւ հայկական մշակութային անկյունը: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր մշակութային անկյունում ներկայացնում էին ազգային տարազներով երիտասարդները:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ Թբիլիսիի սակրեբուլոյի փոխնախագահներ Ջուրաբ Աբաշիձեն, Թինաթին Նիբլոշվիլին, Լեզվի ազգային դեպարտամենտի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի տեղակալ Շոթա Ռեխվիաշվիլին:



ԹՈՒՐԹԻԱ ՊԱՅԹՅՈՒՆ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ. ԿԱՆ ՄԱՐԴԱԿՅԻՆ ՁՈՂԵՐ

Ստամբուլի Իսթիքլալ պողոտայում ահաբեկություն է տեղի ունեցել: Արդյունքում զոհվել է ութ, վիրավորվել՝ 81 քաղաքացի:

Թուրքիայի ներքին գործերի նախարարության տվյալներով, ահաբեկությունից հետո անվտանգության ծառայություններն ուսումնասիրել են տեսախցիկների 1200 ձայնագրություններ եւ 21 տարբեր հասցեներում ձերբակալել 46 մարդու: Որպես պայթուցիկ սարք օգտագործվել է տրոտիլ: Ահաբեկության հեղինակ կինը՝ Ախլամ Ալբաշիրը, հարցաքննության ժամանակ խոստովանել է, որ իրեն Թուրքիա են ուղարկել Քրդական աշխատավորական կուսակցության եւ Սիրիայի քրդական ժողովրդական պաշտպանության միավորումների անդամները:

«ՄԵԾ ՔՍԱՆՅԱԿ» ԸՆԴՈՒՆՎԵԼ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՊԱՏՄԱՊԱՏՈՂ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Ինդոնեզիայի Բալի կղզում անցկացված «Մեծ քսանյակի» հավաքին, ընդունվել է հռչակագիր, որտեղ խստորեն դատապարտում է Ուկրաինայի դեմ Ռուսաստանի ագրեսիան:

Հռչակագիրը հավանության է արժանացել «Մեծ քսանյակի» բոլոր անդամների կողմից:

ԱՄՆ ՍԵՆԱՏԸ՝ ԴԵՄՈՎԱՏՆԵՐԻ, ԻՍԿ ԿՈՆԳՐԵՍԸ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Հանրապետական կուսակցությունը մեծամասնություն է ստացել ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում: Այժմ նրանք արդեն երաշխավորված 218 մանդատ ունեն, ինչը մեծամասնության համար անհրաժեշտ նվազագույնն է: Սակայն, միջանկյալ ընտրությունների համար ձայների հաշվարկը դեռ շարունակվում է:

Կանխատեսվում է, որ 435-տեղանոց Ներկայացուցիչների պալատում «Հանրապետական կուսակցությունը» կստանա 223 մանդատ: Այս պահին դեմոկրատներն ունեն երաշխավորված 210 մանդատ:

Ինչ վերաբերում է Սենատին, ապա դեմոկրատները կարողացան այստեղ պահել մեծամասնությունը: Այս պահին նրանք արդեն 50 ձայն ունեն: Ջորջիա նահանգում պետք է անցկացվի ընտրությունների երկրորդ փուլը, սակայն, դրա արդյունքը չի ազդի ուժերի հարաբերակցության վրա:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ



80 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ՝ ՍՈՑԻԱԼԱԿԵՆ ԱՆԱՊԱՅՐՈՎՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վրաստանի փախստականների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Ջուրաբ Ազարաշվիլու խոսքով, 2023 թվականին սոցիալապես անապահով քաղաքացիների զբաղվածության պետական ծրագրի իրականացման համար կծախսվի 80 մլն լարի:

Հատկանշական է, որ ընթացիկ տարում առողջապահության նախարարությունը տվյալ ծրագրի շրջանակում նախատեսել էր ծախսել 40 մլն լարի:

- Ենթադրվում է, որ մոտավորապես 22-23 հազար անապահով կարգավիճակ ունեցող քաղաքացի եւս կունենա զբաղվածություն,- ասել է Ազարաշվիլին:

Տեղեկացնենք, որ այս տարի կառավարությունը սկսել է պետական ծրագիր, որի շրջանակներում 4 տարի չի նախատեսվում սուուզել սոցիալապես անապահով անձանց միավորները, եթե նրանք պետության կողմից առաջարկվող աշխատատեղերում աշխատանքի անցնեն: Ծրագրի շրջանակներում, աշխատողների ամսական աշխատավարձը տատանվում է 150-300 լարիի սահմաններում:

ՌՈՒՄ - ՌԻՎՐԱԻՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՏՈՒԹՅՈՒՆ. 268-ՐԴ ՕՐ

ՎԼԱԴԻՄԻՐ ԶԵԼԵՆՍԿԻՆ ԱԶՍԱԳՐՎԱԾ ԽԵՐՍՈՒՈՒՄ

Նոյեմբերի 13-ին Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկին ժամանեց դրանից երկու օր առաջ ռուս օկուպանտներից ազատագրված Խերսոն քաղաք:

Ձիճառայողների հետ հանդիպմանը Ուկրաինայի նախագահը հայտարարեց, որ Խերսոնի մարզում 60 բնակավայր է ազատագրվել: Ուկրաինայի նախագահի խոսքով, Խերսոնից նահանգի ժամանակ ռուսական բանակն ամբողջությամբ ոչնչացրել է կրիտիկական քաղաքացիական ենթակառուցվածքը:

Զելենսկին ասաց նաեւ, որ ուկրաինացի զինվորականները Խերսոնում արդեն հայտնաբերել են ավելի քան 2000 պայթուցիկ սարք եւ ական: Նա քաղաքացիներին հորդորեց ինքնուրույն չստուգել կասկածելի իրերը:

Ուկրաինայի նախագահի խոսքով, Ռուսաստանի կողմից օկուպացված տարածքների բնակիչները, այդ թվում՝ Ղրիմը, անպայման կհանդիպեն Ուկրաինայի զինված ուժերի մարտիկներին, ինչպես Խերսոնում:

Նշենք, որ Ուկրաինայի նախագահի վարչակազմի

տեղեկատվությամբ, ռուսական հրթիռային հարձակումների արդյունքում Ուկրաինայում մինչեւ յոթ միլիոն մարդ մնացել է առանց էլեկտրականության:

Ռուսաստանի կողմից իրականացված հարձակման արդյունքում վնասվել է 15 էներգետիկ օբյեկտ, թեւեւ ուկրաինական հակաօդային պաշտպանության համակարգերին հաջողվել է խոցել 90 հրթիռներից 70-ը:

ԻՆՏԵՆՍԻՎ ՄԱՐՏԵՐ՝ ՌԱԶՄԱՃԱԿՍԻ ԲՈԼՈՐ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ

Ուկրաինայի գլխավոր շտաբի տվյալներով, ուկրաինական բանակը Դոնեցկի մարզի ինը բնակավայրերի մոտ ետ է մղել ռուսական օկուպացիոն ուժերի հարձակումը:

Ռուս զինվորականներն ինտենսիվ հարձակում են իրականացնում Բախմուտի, Ավդեեկայի եւ Նովոպավլովսկի ուղղությամբ, տանկերով եւ հրետանիով կրակ են բացել Ջապոռոժեի շրջանի բնակավայրերի ուղղությամբ:

Իր հերթին, ուկրաինական բանակը ռմբակոծել է ռու-

սական օկուպացիոն ուժերի դիրքերը Դնեպր գետի ձախափին, Կիմոնեն թերակղզում: Ուկրաինայի «Հարավ» օպերատիվ հրամանատարության տվյալներով, ոչնչացվել են հակառակորդի կենդանի ուժը, զրահատեխնիկան, ինքնագնաց հրետանային կայաններն ու անօդաչու հետախուզական ինքնաթիռները:

ՀՐԹԻՈՒ ՊԱՅԹՅՈՒՆ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Նոյեմբերի 15-ին Լեհաստանում ուկրաինական սահմանի մոտ հրթիռ է ընկել երկու մարդ է զոհվել: Միջադեպի կապակցությամբ Լեհաստանի վարչապետը Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ է անցկացրել: Ինչպես հայտարարեց Լեհաստանի նախագահ Անջեյ Դուդան, Լեհաստանի պայթյունը, ամենայն հավանականությամբ, եղել է ուկրաինական հակաօդային պաշտպանության հետեւանքով, չկա նշան, որ հրթիռի խոցումը հարձակում է եղել: Նրա խոսքով, դա հավանաբար դժբախտ պատահար էր:

Ըստ լրատվական գործակալությունների